ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.01.2026

Սիրելի՛ հայրենակիցներ

Հայոց բանակի հարգարժա՛ն սպաներ և զինվորներ
Այսօր մեր պետականության ամենանվիրական տոներից մեկն է՝ ՀՀ զինված ուժերի կազմավորման օրը:
Հունվարի 28-ը խորհրդանշում է մեր ժողովրդի հավաքական կամքը, ազատ ապրելու իրավունքն ու պետականության կերտման՝ մեր ընտրած հաստատուն ճանապարհը:
Բանակը ստեղծվեց մեր նորանկախ հայրենիքի համար բարդ ու վճռորոշ տարիներին՝ միասնական կամքի և նվիրվածության շնորհիվ: Տարիների ընթացքում այն դարձավ Հայաստանի անվտանգության, խաղաղ կյանքի և պետականության ամրության հիմնասյուներից մեկը:
Խորին երախտագիտությունս բոլոր նրանց, ովքեր կանգնած են եղել կանոնավոր բանակի ստեղծման ակունքներում, ովքեր տարբեր ժամանակներում մասնակցել են նրա կազմավորմանը, կայացմանն ու հզորացմանը, բոլոր նվիրյալներին, որոնց ծառայությամբ ամրապնդվել է մեր պաշտպանական համակարգը:
Այս տարի Բանակի օրվա նախօրեն առանձնահատուկ բովանդակություն ուներ:
Երեկ մեր երկրում առաջին անգամ պաշտոնապես նշվեց Հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի օրը: Այն լոկ հիշատակման արարողություն չէր, այլ բարոյական հիմք և խոնարհումի վերահաստատում այն հերոսների առջև, ովքեր անմնացորդ սիրով իրենց կյանքը նվիրեցին հայրենի հողին՝ հանուն անկախ պետականության և մեր ժողովրդի անվտանգ ապագայի: Նրանց սխրանքը մեր ապրելու և արարելու իրավունքի գինն է, նրանց հիշատակը՝ Հայոց բանակի հարատևության գրավականը, իսկ մեզ համար պարտավորություն է՝ պահպանելու, զորացնելու Հայաստան պետությունը:
Այսօր բոլորիս առանձնահատուկ շնորհակալությունն ուղղված է այն զինվորներին և սպաներին, որոնք օր ու գիշեր կանգնած են մեր սահմաններին:
Հայոց բանակի կազմավորման 34-ամյակի առթիվ շնորհավորում եմ բոլորիս՝ մաղթելով մեր զինվորներին խաղաղ ծառայություն, ուժ և ամուր կամք, իսկ մեր ժողովրդին՝ միասնություն, խոհեմություն և վստահություն Հայաստանի վաղվա օրվա նկատմամբ:
Կեցցե՛ Հայոց բանակը:
Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը: